լուրք կը սկսին շարուիլ։ Վերջին լուրերն առաւօտեան երեքուկիսուն ամենները կ'ընդունին, և ապա երես երես օրագիրն կը չինուի և'կը տպուի։

Ինչպէս յիտալիա լրագրոյ գլխաւոր շահու աղբիւրն ծանուցմունքն են, այսպէս նաև Միացեալ Նահանգաց մէջ։ Նիու Եօրք Հէրալտ այս գուշակեայ միջոցով տարին 4 կամ 5 միլիոն վաստրկեցաւ։

Եթէ Պէնիէդ մէկ կողմէն շատ կը վատրկի, պէտք է ճանչնալ որ երբեք յետս չինհանիր, և ոչ երբեք նհանիած է ամենէն իսկ աւելի տարապայման ծախուց առջև։ Բաւական է ըսելն՝ որ 25,000 լիրայ ծախք ըրաւ Ադլանտեան հեռագրին միջոցով ընդունելու համար Բրուսիոյ թագաւորին Ատենի բացման ճառն, յամին 1867։ Ուրիշ առթով մ'ալ 35,000 լիրայ ծախք ըրաւ՝ առ Ամերիկեան պատգամաւորս ոմանս որ-բուած տեղեակ մը'ի կորչաքով եկեղեցեկ խօսեցեալ բարեմաղթութեանց բընագիրը ունենալու համար։ Իրեն ծախքովը Նիու Եօրքի Ողբերգութեան Պաշտօնարանը կանգնեց, զոր ինքն կը պահէ, որպէս զի մեծնորատային փոփոխմանց վրայ ճշդագոյն տեղեկութիւններ ունենայ։ Վերջերս կէս միլիոն տուաւ բարերական գործոյ մը համար։

Հէրալտի հիմնադրին որդին՝ արդի տէրը՝ հօրը արժանաւոր զաւակ է։

ՆԱԻՈՐԴԻ ՑՈՐՋԱՑԻՆ ԲԵԻԵՌ

Քանի մը տարի առաջ յՌաձեռն ժամանակագրութեան տպագրեալ 'ի Լոնտրա [1] 'ի բառն Arctic circle (Discovery of) կը տեսնենք ցուցակ մը ճանապարհորդաց և նաւորդաց, որք զընացին 'ի հիւսիս՝ գտնելու նոր երկիրներ և փնտրուելու անցք մը հիւսիսային Ովկիանոսին մէջ Ալանդեանէն 'ի Խաղալական, անցնելով Պերինկայ նեղուցը։

Նոյն ցուցակը կը թարգմանեմք և միանգամայն կը ծանուցանեմք երևելի ճանապարհորդի մը անունը 'ի բաց թողուելը, որ անոնց պարագլուխ համարեալ է, այսինքն Յովհաննու Քապոտոդոյ, Սեբաստիանոսին հօրը. և այս կը վաւերացուի բազմաթիւ յիշատակարանաց և վենետկեան գաւառաց դիւաններուն ձեռագրովք։

« Այլ և այլ փորձեր եղան, զանազան եղանակաւ 'ի բաղում՝ ճանապարհորդաց՝ մտնելու ձեան և սառուցի գաւառները։ Ակսանտինավիանք 'յԹ, Ժ, ԺԱ դարուն. Վենետկեցիք, Սպանիացիք և Բորդուգալցիք յաջորդ ժամանակները չարունակեցին զայն խուզարկելն։ Յարջային բևեռ նշանաւոր ուղևորութիւնքն, սկսեալ 'ի ԺԵ դարու մինչև ՅԺԷ, հետևեալներն են.

Ամ Տեառն		
1498	—	Սեբաստիանոս Քապոտոդոյ կը հասնի Արջային գաւառները։
1517	—	Իւր երկրորդ ճանապարհորդութիւնը մի և նոյն կողմը (2)։

1 The Manual of Dates A Dictionary of Reference of the most important facts and events in the History of the World, by George H. Townsend. — London Frederick Warne et C.° 1877.

2 Ուզէլով

1498 — Յովհաննէս Քապոտոդոյ կը հասնի Արջային երկիրները։

1517 — Սեբաստիանոս Քապոտոդոյ իւր առաջին ճանապարհորդութիւնը կ'ընէ գէպ 'ի նոյն կողմերը։

digitised by A.R.A.R.@

Ամ	Տեառն	
1527	—	Ռոպէրդ Դոնն, վանականի Պրիսքը, կը գրէ սուպլիկով զՀնրիկոս Ը, որ բեռեռային ուղևորութեան մը ձեռնտու ըլլայ. և վերջապէս երկու նաւք Սիմոն և Մէրիոֆ կիսիդր կ'որոշուին։
1553	—	Սըր Ուկոյ Ուիլլսի կը գտնէ նոր Ջեմլան։ Կը գտանայ և գարձեալ կը ճանապարհորդէ 'ի Լաբոնիա, ուր ինքն և իւր ընկերքն սովէ կը մեռնին 'ի յունուարի 1554 ամին (1)։
1576	Յունիս 7	Ֆրոպիշէոյ կը մեկնի յառաջին ճանապարհորդութիւն։
1580	—	Բէդ և ՁԷբմըն կը ճանապարհորդեն 'ի խնդիր Հիւս-արևելեան անցից. բայց սուպլիկաք 'ի սառոյցէ կը դառնան յետս։
1585	Յունիս 7	Յովհաննէս Տէյվիզ կը թողու Ֆարտմրդ իւր առաջին ճանապարհորդութեան համար, և Ամիրիկոյ հիւս-արևելեան նեղերաց քանի մը երկիրներ գտնալէն ետքը, կը դառնայ Անգղիա յ30 սեպտեմբերի 1586։
1586	—	Երկրորդ ճանապարհորդութիւն Տէյվիզի։
1587	—	Երրորդ ճանապարհորդութիւն Տէյվիզի։
1594	—	Հրամանատարք Գուլիէլմոս Պէրէնցի հրամանին տակ ուղևորութիւն մը կը զրկեն 'ի խնդիր հիւսիսային անցի մը։
1595	—	Պէրէնցի երկրորդ ճանապարհորդութիւն։
1596	—	Պէրէնցի երրորդ ճանապարհորդութիւնն։
1602	—	Գէորգ Ուէյմըդ կը նաւէ, ընդունայն տեղ փնտռելով Հիւս-արևմտեան անցք մը։
1607	Մայիս 1	Հէնսըն կը մեկնի յառաջին ճանապարհորդութիւն։
1608	—	Հէնսընի երկրորդ ճանապարհորդութիւնն։
1609	—	Հէնսընի երրորդ ճանապարհորդութիւնն։
1610	—	Հէնսըն կը մեկնի չորրորդ անգամ և կը գտնայ Հուտսոնի ծոցը. իւր գերիները կ'ապստամբին և կը թողուն զինքը ցրտէ և անօթութենէ մեռնելու։
1615	—	Ճանապարհորդութիւն Պայլօդի, յորում Պէֆֆին իբրև նաւավար կը գործէ։
1616	—	Պայլօդ և Պէֆֆին Պաֆֆէնի ծոցը կը գտնան։
1631	—	Ճէյմըզի վտանգաւոր ճանապարհորդութիւնն։
1676	—	Ուտ Նաւապետն կը նաւէ 'ի խնդիր հիւս-արևմտեան անցքի մը։
1728	—	Պէհրինկ յառաջին ճանապարհորդութեան իւրում՝ կը քնէ իւր անուամբ նեղուցը։
1729	—	Պէհրինկի երկրորդ ճանապարհորդութիւնն։
1741	—	Երրորդ ուղևորութիւն և մահ Պէհրինկի։
1743	—	Անգղիոյ Տէրութիւնն 20 հազար ստէրլին պարգև կը խոստանայ ով որ Հուտսոնի նեղուցէն հիւս-արևմտեան անցք մը գտնայ։
1773	—	Ճանապարհորդութիւն Ֆիպսի և Լաթվիչի։ Որսափոս (ապա Լորտ) Նելսըն կ'ընկերանայ այս ուղևորութեան։
1776	—	Ճանապարհորդութիւն Քուքի և Քլարքի »։

Յուցակ մեր դարուն մէջ՝ Միացեալ Նահանգաց և Անգղիոյ դիմատոր հիւսիսային ուղևորութեանց՝ հրամանատարաց և նաւուց անուանց։

1818	Յովհաննէս Ռոս, Իոպէլլա և Այրէքսանդր։	1819–21 Ֆրանքլին, — ցամաքային առաջին ուղևորութիւն։
1818	Պուքըն և Ֆրանքլին, Ֆորդիա և Թրրներ։	1819–20 Բէյրի, Հէքլա և Կրայբա։
		1821–23 Բէյրի, Ֆուրի և Հէքլա։

1 Յանգլիա՝ Վենետիկոյ դեսպան Լոնտրայէն յամին 1555 մայիսի 21ին և Նոյեմբերի 4ին գրած նամակաց մէջ երկու հիւսեւալ Ճանապարհորդութեան տեղեկութիւն կու տայ, որք Թանէրի գրքին մէջ չեն յիշուիր։ Տես Զ հատոր, Մասն Ա (1555–1556) եր. 76 և 238 'ի « Calendar of State Papers and manuscripts relating to English affairs existing in the Archives and collections of Venice. » etc.

digitised by A.R.A.R.@

1824 Լանան, Կրոյդրա։
1824–25 Բէրրի, Հէրլա և Ֆուրի։
1825–27 Ֆրայնբլին, — ցամաքային երկրորդ ուղևորութիւնն։
1826–28 Պուբրն, Պրոսբն։
1829–33 Յովհաննէս Ռոս, Վիրրրի։
1833–35 Պէք, — ուղևորութիւն ցամաքային։
1836–37 Պէք, Թէրոյ։
1836–39 Տիին և Արմսբն, — ուղևորութիւն նաւակաց։
1845–46 Ֆրայնբլին, Էրեբոս և Թէրոյ։
1846–47 Ռէյ, — ուղևորութիւն նաւակաց։
1848–49 Յակոբ Ռոս, Էնդրբրբայլ և Ինվիգարկէրոյ։
1848–49 Ռիչբրդսբն, — ուղևորութիւն նաւակաց։
1848–52 Մուր, Բլավիս։
1849–51 Բուլբն, — ուղևորութիւն նաւակաց։
1849–50 Հուբբբ, — ուղևորութիւն նաւակաց։
1849–50 Սօնտէրս, Նորդ Սդար։
1850 Ֆոսայտ, Բրինճ էլպեդ։
1850–53 Քօլլինսբն, Էնդրբրբայլ։
1850–54 Մբբլուրդ, Ինվիգարկէրբ։
1850–51 Օսդին, Ռրիզոլբդ, Լարսդրնց, Ինդրբրիտ և Բաքօնիար։
1850–51 Յովհաննէս Ռոս, Ֆիրիբ։
1850–51 Բէննէ, Լէյտ Ֆրանքլին և Սոֆայա։
1850–51 Տը Հէֆբն և Քէն, Աստանճ և Ռիսբիս։
1851–52 Քէննեդէ (Պէլլոդ), Բրինճ էլպրդ։
1851–54 Ռէյ, — ուղևորութիւն ցամաքային։
1852–54 Մբկուայբ, Բլավրբ։
1852–54 Պէլչբբ, Ամիդրնց և Բաքօնիար։
1852–54 Բէլլէդ, Ռիզոլոդ և Ինգրէրիտ։
1852–54 Բուլբն, Նորդ Սդար։
1853–55 Քէին, Բասանց։
1857–59 Մբբլինդոբ, Ֆոբ։
1859–60 Հէնէշ, Իսանայտիս Սդէյց։
1870–72 Հասլ, Բոլտրիլ։
1871–72 Մէրրիմբն, Իսուանիդա։
1872–73 Կրին, Թակրրբ։
1875–76 Նէրվ և Սթիվբնսբն, Լիկոդ և Տիսքավրրի։

«Արջային բևեռի Նէրվ և Սթիվբնսբնի ուղևորութիւնն, պատրաստեալ և կազմեալ 'ի Բրիտանական տէրութենէ' մեծաւ ծախիւք, ըստ բաղում տեսութեան օգտակարագոյն եղաւ։ 1875ի մայիս 29ին թողուց դԲօրտմրդ և դարձաւ 'ի Քուենսդաան հոկտեմբեր 27ին և 'ի Բօրտմրդ նոյեմբեր 2ին 1876 ամին, հասնելով լայնութեան 83 աստիճանը և 20', հիւսիսային բևեռէն միայն 400 մղոն հեռու, ուր սառուցի բարձր լեռներն կ'արգելուին յառաջելու»։

1878 յունիս 1880 յունուար

Նորտենսքիօլտ և Բաքանտար, Վէկա։

Վէկայի ճանապարհորդութիւնն բարեբաղդագոյն եղաւ 'ի մէջ ուղևորութեանց, ընդ հրամանատարութեամբ Բոլանտարի զնկավարի և ընդ իշխանութեամբ Նորտենսքիօլտ աստղաբաշխին։ Այս շուտացի նաւուն պահուած էր Այտանդեանէն 'ի թաղաղական սառոյցներուն մէջէն անցնելու բաղդն։

Բաց 'ի վերոյիշեալներէն, նաւուն մէջ կը գտնուէին Պրունզվիգ շուտացի տեղական, Հոֆկարտ տանիմարգացի տեղական, Նորբուիտ ռուսաց բանակին տեղական, Պովէ իտալական ծովային բաղական, Ֆիէլման ուսուցիչ բուսաբանութեան, Ադուքսէրի կենդանաբան, Աէքվիստ բժիշկ։

Այս ուղևորութիւնն կ'ուզէր ճանապարհորդել Եւրոպիոյ և Ասիոյ հիւսիսային կողմերը Սիբերիոյ ծովուն մէջէն, Պեհրինգի նեղուցը անցնիլ և պտրաելով արևելեան և հարաւային Ասիոյ չորս կողմը՝ հանդիպիլ 'ի Հաբոն և գառնալ 'ի Հայրենիս կարմիր ծովէն։

Վէկա Հիւս-արևելեան՝ Այտանդեանէն 'ի թաղաղական մեծ շրջանը կատարեց, որ 'ի բաղում դարուց աշխարհագրական մեծ առաջարկութեանց մէկն եղած էր, և որուն լուծումն ամենուն փափաքն էր, բայց ոչ երբէք արդիւնաւորեալ։

digitised by A.R.A.R.@